

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1903/B01 «Քաղաքացիական իրավունք –1»

Որակավորման
աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

Կազմել են՝

իրավ. գիտ. դոկտ., պրոֆ. **Տ.Կ. Բարսեղյանը**
իրավ. գիտ. թեկն., դոց. **Վ.Դ. Ավետիսյանը**
իրավ. գիտ. թեկն., դոց. **Ս.Գ. Մեղոյանը**

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1903/B01. Քաղաքացիական իրավունք-1 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (դասախոսություն՝ 40, սեմինար՝ 8, գործնական՝ 16, ինքնուրույն աշխատանք՝ 86 ժամ)
3-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման առանձնահատկություններին, դրանց մասնակցող սուբյեկտների իրավասուբյեկտությանը, իրավունքներին ու պարտականություններին, քաղաքացիական իրավունքի օբյեկտների կարգավիճակին, իրավունքների պաշտպանության եղանակներին ու կարգին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա գիտելիք և իմացություն

- ՀՀ քաղաքացիական իրավունքի առանձնահատկությունների,
- ՀՀ քաղաքացիական իրավունքի ընդհանուր մասի վերաբերյալ:

Ունակ կլինի (թուն մասնագիտական կարողություններ)

- պատկերացնել ՀՀ քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունների էությունը,
- ներկայացնել ՀՀ քաղաքացիական իրավունքների իրականացումը, պաշտպանության ձևերն ու իրավունքները,
- բացահայտել ՀՀ քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավական կարգավիճակը,
- ընկալել ՀՀ քաղաքացիական իրավունքի համար ընդհանուր նշանակություն ունեցող ինստիտուտները,
- վեր հանել օրենսդրական թերությունները և առաջարկություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Գիտելիքների ստուգման ձևերը, մեթոդները և գնահատման չափանիշները

Նախատեսված են երկու ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով:

Առաջին ընթացիկ ստուգման նպատակն է պարզել սույն ծրագրի 1-ից 8-րդ թեմաների իմացությունը: Ստուգումը բանավոր է:

Քննության ընթացքում ուսանողին տրվող քննական տոմսը պարունակում է երեք հարց՝ առավելագույնը 3 միավոր արժեքով: Միավորների քայլը 0.5 է:

Երկրորդ ընթացիկ ստուգման նպատակն է՝ 9-ից 13-րդ թեմաների իմացությունը: Ստուգումը գրավոր է:

Ստուգման ընթացքում ուսանողին տրվող քննական թերթիկը պարունակում է 3 խնդիր:

Խնդրի լուծումը ենթադրում է պատասխան և դրա հիմնավորում:

Խնդիրների պատասխանը շարադրելիս ուսանողը պետք է սպառիչ և հնարավորինս հակիրճ շարադրի տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նորմերը, վերջիններիս կիրառման կապակցությամբ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները (առկայության դեպքում), տա խնդրում առկա հանգամանքների իրավական գնահատականը՝ վերջում ձևակերպելով իր վերջնական եզրահանգումը:

Յուրաքանչյուր խնդրի լուծումը գնահատվում է առավելագույնը 3 միավոր: Միավորների քայլը 1 է:

Առավելագույն միավորը շնորհվում է համապատասխան շարադրանքի սպառիչ և ճիշտ լինելու դեպքում: Ճիշտ, սակայն թերի պատճառաբանված պատասխանը գնահատվում է մինչև 2 միավոր: Սխալ, չպատճառաբանված կամ խիստ թերի պատճառաբանված պատասխանը գնահատվում է 0 միավոր:

Վերջնական գնահատականը որոշվում է բոլոր առաջադրանքների կատարման և խնդիրների լուծման համար շնորհված միավորների հանրագումարով:

Տրամադրվող ժամանակը՝ 80 րոպե:

ԹԵՍԱ 1.

Քաղաքացիական իրավունքը որպես Հայաստանի իրավունքի ճյուղ

(դասախոսություն՝ 4, սեմինար՝ 2, գործնական՝ 2 ժամ)

1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը, դրա տարբեր իմաստները: Քաղաքացիական իրավունքը որպես իրավունքի ճյուղ:
2. Քաղաքացիական իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների կազմը (իրավական կարգավորման առարկան):
3. Քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող գույաքային հարաբերությունների հասկացությունը և առանձնահատկությունները (ապրանքադրամային բնույթ, հատուցելիություն):
4. Անձնական ոչ գույքային հարաբերությունների հասկացությունը, առանձնահատկությունները, դրանց տեսակները (գույքային հարաբերությունների հետ կապված և գույքային հարաբերությունների հետ չկապված հարաբերություններ):
5. Քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող գործարարական հարաբերությունները: Ձեռնարկատիրական (գործարարական) գործունեության հասկացությունը և հատկանիշները:
6. Կորպորատիվ հարաբերությունների հասկացությունը և առանձնահատկությունները:
7. Քաղաքացիական իրավական կարգավորման մեթոդի հասկացությունը և առանձնահատկությունները (քաղաքացիական իրավական հարաբերությունների սուբյեկտների հավասարությունը, կամքի ինքնավարությունը, գույքային ինքնուրույնությունը, ինքնուրույն գույքային պատասխանատվությունը, իրավունքների պաշտպանության ինքնատիպությունը):
8. Քաղաքացիական իրավունքի սահմանազատումն իրավունքի մյուս ճյուղերից:
9. Քաղաքացիական իրավունքի սկզբունքները. հասկացությունը, կազմը նշանակությունը: Կողմերի իրավահավասարությունը: Կամքի ինքնավարությունը և պայմանագրի ազատությունը: Սեփականության անձեռնմխելիությունը: Մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիությունը: Քաղաքացիական իրավունքների անարգել իրականացումը: Խախտված իրավունքների վերականգնման ապահովումը: Խախտված իրավունքների դատական պաշտպանությունը:
10. ՀՀ քաղաքացիական իրավունքի համակարգը: Իրավունքի պանդեկտ և ինստիտուցիոնալ համակարգերի էությունը և առանձնահատկությունները:

Հարցեր 1-10 – Անցկացվում է ներածական դասախոսություն՝ գծապատկերների ցուցադրմամբ:

Հարցեր 2-7 – Սեմինար պարապմունք, որի ընթացքում ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված նյութը, ՀՀ վճռաբեկ

դատարանի նախադեպային ակտերը, ինչպես նաև խնդրահարույց հարցերը:

Չարցեր 8-9 – Գործնական պարապմունք, որի ընթացքում ուսանողները ձեռք են բերում քաղաքացիաիրավական հարաբերություններն իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող հարաբերություններից սահմանազատելու հմտություններ, լուծում են խնդիրներ:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանդակ նյութեր

- Չայաստանի Չանրապետության սահմանադրություն:
- Չայաստանի Չանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- **Քարտեյան Տ.Կ.**, Չայաստանի Չանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՉ հրատ., 2006:
- **Ավետիսյան Վ.Ղ., Մեղոյան Ս.Գ.** Զաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՉ հրատ., - Եր., 2006:
- ՉՉ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թ. թիվ ԵԶԴ/0736/02/08 գործով որոշումը (քաղաքացիական օրենսդրության կիրառման շրջանակների վերաբերյալ):
- ՉՉ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թ. թիվ 3-1848/ՎԴ գործով որոշումը (աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսգրքի դրույթների կիրառման վերաբերյալ):
- ՉՉ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թ. թիվ ԵԿԴ/2028/02/10 գործով որոշումը (հարկային իրավահարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսգրքի դրույթների կիրառման վերաբերյալ):
- ՉՉ վճռաբեկ դատարանի 01.08.2007 թ. թիվ 3-1161/ՏԴ գործով որոշումը (ձեռնարկատիրական գործունեության հատկանիշների վերաբերյալ):
- ՉՉ վճռաբեկ դատարանի 26.12.2006 թ. թիվ ՎԴ3/0207/05/08 գործով որոշումը (ձեռնարկատիրական գործունեության հատկանիշների վերաբերյալ):
- ՉՉ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թ. թիվ ՎԴ/0253/05/08 գործով որոշումը (ձեռնարկատիրական գործունեության հատկանիշների վերաբերյալ):
- ՉՉ վճռաբեկ դատարանի 19.10.2012 թ. թիվ ԼԴ/0175/02/11 գործով որոշումը (պայմանագրի ազատության սկզբունքի վերաբերյալ):
- ՉՉ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թ. թիվ ԵՄԴ/0199/02/10 գործով որոշումը (կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքների վերաբերյալ):

ԹԵՄԱ 2.

Քաղաքացիական իրավունքի գիտությունը

(ինքնուրույն աշխատանք)

1. Քաղաքացիական իրավունքի գիտության հասկացությունը և առար-

կան: Զաղաքացիական իրավունքը որպես իրավագիտության բաղկացուցիչ մաս: Զաղաքացիական իրավունքը և քաղաքացիական իրավունքի գիտությունը: Զաղաքացիական իրավունքի գիտության բովանդակությունը:

2. Հետազոտման մեթոդների կիրառումը քաղաքացիական իրավունքի գիտության մեջ: Հետազոտման ընդհանուր մեթոդների կիրառումը քաղաքացիական իրավունքի գիտության մեջ: Հետազոտման հատուկ մեթոդների հասկացությունը, նշանակությունը և առանձին տեսակները (համեմատական իրավագիտության մեթոդ, համակարգային վերլուծության մեթոդ, քանակական վերլուծության մեթոդ և այլն):
3. Զաղաքացիական իրավունքը որպես ուսումնական դասընթաց:

Հարցեր 1-3 – Ինքնուրույն աշխատանք՝ հանձնարարված դասագրքային նյութի ուսումնասիրությամբ:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաստանողակ նյութեր

- **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2006:

ԹԵՄԱ 3.

Քաղաքացիական իրավունքի աղբյուրները

(դասախոսություն 2 ժամ)

1. Իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները:
2. «Քաղաքացիական օրենսդրություն» հասկացության տարբեր իմաստները: Քաղաքացիական օրենսդրությունը որպես քաղաքացիական իրավունքի աղբյուրների համակցություն:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որպես քաղաքացիական օրենսդրության հիմք:
4. Քաղաքացիական օրենսդրության կազմը: Քաղաքացիական իրավունքի աղբյուրների հիերարխիան:
5. «Օրենքներ» և «այլ իրավական ակտեր» եզրույթները ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ:
6. Միջազգային պայմանագրերը որպես քաղաքացիական իրավունքի աղբյուրներ:
7. Օրենքները քաղաքացիաիրավական կարգավորման համակարգում:
8. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը որպես համակարգման բարձրագույն ձևի՝ կոդիֆիկացիայի եղանակով ստեղծված իրավական ակտ:
9. Այլ օրենսգրքերը և ընթացիկ օրենքները որպես քաղաքացիական իրավունքի աղբյուրներ:
10. Այլ իրավական ակտերը (ՀՀ նախագահի հրամանագրերը, կառավար-

րության որոշումները, գերատեսչական նորմատիվ ակտեր, տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը) քաղաքացիաիրավական կարգավորման համակարգում:

11. Սովորույթները, համակեցության կանոնները և բարոյական նորմերը քաղաքացիական իրավունքում: Գործարար շրջանառության սովորույթների հասկացությունը, հատկանիշները և կիրառման ոլորտը:
12. Դատական նախադեպը և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների նշանակությունը քաղաքացիական իրավունքում:
13. Լոկալ (ներքին) իրավական ակտերը քաղաքացիական իրավունքում:
14. Քաղաքացիաիրավական կարգավորման դիսպոզիտիվությունը: Դիսպոզիտիվ և իմպերատիվ նորմերի հասկացությունը և հարաբերակցությունը:
15. Իրավունքի և օրենքի անալոզիան քաղաքացիական իրավունքում:
16. Քաղաքացիական օրենսդրության կիրարկումը: Քաղաքացիաիրավական նորմերի գործողությունը ժամանակի մեջ, տարածության վրա, ըստ անձանց շրջանակի:
17. Քաղաքացիաիրավական նորմերի մեկնաբանումը:

Հարցեր 1-17 – Դասախոսություն, որն անց է կացվում ուսանողների նախապես հանձնարարված նյութի քննարկման ձևով:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանողակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք:
- **Քարտեյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2006:
- **Ավետիսյան Վ.Դ., Մեղրյան Ս.Գ.** Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

ԹԵՄԱ 4.

Քաղաքացիական իրավահարաբերություններ

(դասախոսություն 2 ժամ)

1. Քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը և առանձնահատկությունները:
2. Քաղաքացիական իրավահարաբերությունների կառուցվածքը (սուբյեկտներ, օբյեկտ և բովանդակություն):
3. Քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտները: Քաղաքացիական իրավասուբյեկտության հասկացությունը և բովանդակու-

յունը: Իրավահաջորդությունը քաղաքացիական իրավահարաբերություններում: Իրավահաջորդության տեսակները (համընդհանուր և մասնակի):

4. Քաղաքացիական իրավահարաբերության օբյեկտները: «Իրավահարաբերության օբյեկտ» հասկացության տարբեր իմաստները: Քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտներն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության (իրերը, աշխատանքները, ծառայությունները, ոչ նյութական բարիքները, մտավոր գործունեության արդյունքները, տեղեկատվությունը):
5. Քաղաքացիական իրավահարաբերության բովանդակությունը: Քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքի հասկացությունը, տեսակները, բովանդակությունը: Սուբյեկտիվ իրավունք և իրավագործություն: Քաղաքացիական սուբյեկտիվ պարտականություններ, նրանց բովանդակությունը:
6. Քաղաքացիական իրավահարաբերությունների դասակարգումը. գույքային իրավահարաբերություններ և անձնական ոչ գույքային իրավահարաբերություններ, բացարձակ և հարաբերական իրավահարաբերություններ, իրային և պարտավորական իրավահարաբերություններ, քաղաքացիական իրավահարաբերությունների դասակարգումն ըստ այլ հիմքերի (կորպորատիվ և ոչ կորպորատիվ իրավահարաբերություններ, պարզ և բարդ իրավահարաբերություններ և այլն):

Չարդեր 1-6 – Դասախոսություն, որն անց է կացվում ուսանողներին նախապես հանձնարարված նյութի քննարկման ձևով:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2006:
- **Ավետիսյան Վ.Ղ., Մեղրյան Ս.Գ.** Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

ԹԵՄԱ 5.

Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը, իրականացումը և պաշտպանությունը

(դասախոսություն 4 ժամ)

1. Քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացման հիմքերի հասկացությունը: Իրավաբանական փաստեր, իրավաբանական կազմ:

2. Իրավաբանական փաստերի դասակարգումը՝ իրավաստեղծ, իրավափոփոխիչ, իրավադադարեցնող փաստեր: Գործողություններ (իրավաչափ և ոչ իրավաչափ գործողություններ, իրավաբանական արարքներ և իրավաբանական ակտեր), դեպքեր (բացարձակ և հարաբերական իրավաբանական դեպքեր), ժամկետներ:
3. Քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվախ հիմքերը (Գործարքներ, վարչական ակտեր, վարչական ակտ-պայմանագրեր, դատական ակտեր, օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելը, գրական, գիտական, արվեստի բնագավառին վերաբերող երկեր ստեղծելու, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելը, վնաս պատճառելը, անհիմն հարստացումը):
4. Քաղաքացիական իրավունքների իրականացումը և պարտականությունների կատարումը: Իրականացման և կատարման հասկացությունները:
5. Քաղաքացիական իրավունքների իրականացման հիմնական սկզբունքները (իրավունքի իրականացումն իրավունքը կրողի կամքով, սեփական հայեցողությամբ և ի շահ իրեն):
6. Քաղաքացիական իրավունքների իրականացման հիմնական եղանակները (իրավունքները կրողի ակտիվ գործողություններով, գործողությունների կատարումից ձեռնպահ մնալով, ուրիշի գործողությունների կատարումն արգելելով, պարտավոր անձից կատարում ստանալով, որոշակի վարքագծի դրսևորում պահանջելով, պարտավոր անձանց դիմելով, պաշտպանության համար իրավասու մարմիններին դիմելով և այլն):
7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման երաշխիքների մասին:
8. Իրականացման սահմանները: Իրավունքի սահմանանցումը: Իրավունքի չարաշահման հասկացությունը, տեսակները, իրավական հետևանքները:
9. Քաղաքացիական պարտականությունների կատարման տարբեր եղանակները բացարձակ և հարաբերական իրավահարաբերություններում (սուբյեկտիվ իրավունքները խախտող գործողությունների կատարումից ձեռնպահ մնալով, ակտիվ գործողություններ կատարելով):
10. Պաշտպանությունը որպես քաղաքացիական սուբյեկտիվ իրավագործություն: Քաղաքացիական իրավունքների պահպանություն և պաշտպանություն: Պաշտպանության իրավագործությունը որպես քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքի տարր: Պաշտպանության իրավունքի առաջացման հիմքերը:
11. Քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերի հասկացությունը և փոխհարաբերակցությունը: Պաշտպանության ձևերը (քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը, օպերատիվ ներ-

գործության միջոցների կիրառումը, իրավասու պետական կամ այլ մարմինների կողմից քաղաքացիական իրավունքները խախտողների նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառումը):

12. Քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների հասկացությունը և ընդհանուր բնութագիրը:

Հարցեր 1-6 – Դասախոսություն, որն անց է կացվում ուսանողներին նախապես հանձնարարված նյութի քննարկման ձևով:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովանողակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- **Քարտեզյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2006:
- **Ավետիսյան Վ.Ղ., Մեղրյան Ս.Գ.** Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:
- ՀՀ սահմանադրական դատարանի 15.03.2007 թ. թիվ ՍԴՈ-702 որոշումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ):
- ՀՀ սահմանադրական դատարանի 04.03.2011 թ. թիվ ՍԴՈ-904 որոշումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ):

ԹԵՄԱ 6.

Քաղաքացիները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ

(դասախոսություն՝ 6, սեմինար՝ 2, գործնական՝ 2 ժամ)

1. Ֆիզիկական անձը (մարդը) որպես քաղաքացիական իրավունքի անհատական սուբյեկտ:
2. Քաղաքացու անունը և բնակության վայրը: Անվան և բնակության վայրը ընտրելու իրավունքների բովանդակությունը: Քաղաքացու անունը և բնակության վայրը որոշելու նշանակությունը: Քաղաքացու բնակության վայրը և այն որոշելու կանոնները:
3. Քաղաքացիական իրավունակությունը: Իրավունակության և սուբյեկտիվ իրավունքի հարաբերակցությունը: Քաղաքացու իրավունակության սկիզբը և վերջը: Իրավունակության բովանդակությունը և սահմանները: Իրավունակության սահմանափակումը:
4. Քաղաքացիական գործունակությունը: Քաղաքացիական գործունակության հասկացությունը: Իրավունակության և գործունակության տարբերությունը: Գործունակության ծագումը և դադարումը: Գործունակու-

թյան ծագումը մինչև քաղաքացու 18 տարին լրանալը: Էմանսիպացիա, հասկացությունը, հիմքերը և կարգը (դատական և ոչ դատական): Գործունակության տեսակները. լրիվ, մասնակի, սահմանափակ գործունակ և անգործունակ անձինք:

5. Մինչև 14 տարեկան անչափահասների գործունակությունը: Նրանց իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման կարգը: Գործարքներ, որոնք կարող են կնքվել մինչև 14 տարեկան անչափահասների կողմից: Օրինական ներկայացուցիչների պատասխանատվությունը մինչև 14 տարեկան անչափահասների գործողությունների համար:
6. 14-18 տարեկան անչափահասների գործունակությունը: Նրանց իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման կարգը: Գործարքներ, որոնք կարող են կնքվել 14-18 տարեկան անչափահասների կողմից առանց օրինական ներկայացուցիչների համաձայնության: 14-18 տարեկան անչափահասների գույքային պատասխանատվության առանձնահատկությունները:
7. Քաղաքացու գործունակության սահմանափակումը. հասկացությունը, հիմքերը, կարգը և հետևանքները: Գործունակության սահմանափակման վերացումը. հիմքերը, կարգը և հետևանքները:
8. Անգործունակ քաղաքացիներ: Քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները: Քաղաքացու գործունակության վերականգնումը. հիմքերը, կարգը և հետևանքները:
9. Խնամակալություն և հոգաբարձություն: Խնամակալությունը և հոգաբարձությունը որպես իրավունքի համալիր ինստիտուտ: Խնամակալության և հոգաբարձության մարմինները: Խնամակալության հասկացությունը և նշանակման հիմքերը: Հոգաբարձության հասկացությունը և նշանակման հիմքերը: Խնամակալության և հոգաբարձության նշանակման կարգը: Խնամակալի և հոգաբարձուի նշանակման կարգը և պայմանները: Անձինք, որոնք չեն կարող նշանակվել խնամակալ կամ հոգաբարձու: Խնամակալների և հոգաբարձուի իրավունքները և պարտականությունները:
10. Խնամակալության և հոգաբարձության դադարման հիմքերը և կարգը:
11. Պատրոնաժը, որպես հոգաբարձության հատուկ տեսակ. հասկացությունը, սուբյեկտային կազմը, նշանակման հետևանքները և դադարումը:
12. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը և մեռած հայտարարելը:
13. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու նշանակությունը, կարգը, պայմանները և հետևանքները: Անհայտ բացակայող ճանաչված քաղաքացիների հայտնվելու հետևանքները:
14. Քաղաքացուն մահացած հայտարարելու նշանակությունը: Քաղաքացու մահը, նրա մահվան փաստի հաստատումը և նրան մահացած հայտարարելը: Քաղաքացուն մահացած հայտարարելու կարգը, պայմանները և հետևանքները: Մահացած հայտարարված քաղաքացիների հայտնվե-

լու հետևանքները:

15. Զաղաքացու ձեռնարկատիրական (գործարարական) գործունեությունը: Անհատ գործարարի իրավունակության առանձնահատկությունները: Զաղաքացու որպես անհատ գործարար հաշվառելու կարգը, պայմանները և հետևանքները: Անհատ գործարարի պատասխանատվության առանձնահատկությունները (գործարարական ռիսկ): Ապօրինի գործարարության հասկացությունը և քաղաքացիաիրավական հետևանքները:
16. Զաղաքացու սնանկությունը: Սնանկության քաղաքացիաիրավական հետևանքները:
17. Զաղաքացիական կացության ակտերի հասկացությունը, նշանակությունը և գրանցումը:

Չարցեր 1-8 – *Անցկացվում է ներածական դասախոսություն:*

Չարցեր 3-8, 12-14 – *Սեմինար պարապմունք, որի ընթացքում ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված նյութը, ՅՅ վճռաբեկ դատարանի նախադեպային ակտերը, ինչպես նաև խնդրահարույց հարցերը:*

Չարցեր 3-8, 12-14 – *Գործնական պարապմունք, որի ընթացքում լուծվում են խնդիրներ:*

Չարցեր 15-17 – *Ինքնուրույն աշխատանք՝ նախապես հանձնարարված նյութի ուսումնասիրություն:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՅՅ օրենք:
- «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՅՅ օրենք:
- **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2006:
- **Ավետիսյան Վ.Դ., Մեղոյան Ս.Գ.** Զաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:
- ՅՅ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թ. թիվ ԵՇԴ/0101/02/08 գործով որոշումը (արդյո՞ք քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը կարող է քննության առնվել քաղաքացու մահից հետո):
- ՅՅ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թ. թիվ ՎԴ2/0416/05/08 գործով որոշումը (ո՞ր դեպքում է ֆիզիկական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը համարվում ապօրինի):

ԹԵՄԱ 7. **Իրավաբանական անձեր**

(դասախոսություն՝ 6, սեմինար՝ 2, գործնական՝ 4 ժամ)

1. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները. կազմակերպական միասնություն, գույքային առանձնացվածություն, ինքնուրույն գույքային պատասխանատվություն, իր անունից հանդես գալու հնարավորություն: Իրավաբանական անձի հատկանիշների փոխադարձ կապը:
2. Իրավաբանական անձի իրավունակության առանձնահատկությունները. հատուկ իրավունակություն: Իրավաբանական անձի իրավունակության սահմանափակումն օրենքով և կանոնադրային փաստաթղթերով:
3. Իրավաբանական անձի գործունակության առանձնահատկությունները: Կորպորատիվ կառավարման սկզբունքները և իրավաբանական անձի մարմինները:
4. Իրավաբանական անձանց հիմնադրումը: Իրավաբանական անձի ստեղծման տնօրինչական, հայտանորմատիվ և թույլատրվական կարգերը: Իրավաբանական անձի հիմնադիրները: Հիմնադիր փաստաթղթերի հասկացությունը, նշանակությունը, ձևը և բովանդակությունը: Իրավաբանական անձանց պետական գրանցումը, գրանցման համակարգը, կարգը, պայմանները և ժամկետները ըստ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի:
5. Իրավաբանական անձի վերակազմակերպումը. հասկացությունը և եղանակները (բաժանումը, առանձնացումը, միաձուլումը, միացումը, կազմակերպահրավական ձևի փոփոխումը): Իրավաբանական անձի վերակազմակերպման կարգը: Իրավահաջորդությունը իրավաբանական անձանց վերակառուցման ժամանակ: Փոխանցման ակտ և բաժանիչ հաշվեկշիռ: Իրավաբանական անձի վերակազմակերպման պետական գրանցումը:
6. Իրավաբանական անձի լուծարման հասկացությունը և հետևանքները: Լուծարման եղանակները: Իրավաբանական անձի լուծարման կարգը: Իրավաբանական անձի լուծարման ժամանակ նրա պարտատերերի պահանջների բավարարման կարգն ու հերթականությունը: Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցումը:
7. Իրավաբանական անձի սնանկությունը: Սնանկության իրավական կարգավորումը: Սնանկության հասկացությունը և հատկանիշները: Սնանկության հետևանքները:
8. Իրավաբանական անձի անհատականացման միջոցները:
9. Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ):
10. Իրավաբանական անձանց տեսակները, նրանց դասակարգումը և դրա քաղաքացիաիրավական նշանակությունը:

11. Տեստսական ընկերակցությունների, ընկերությունների հասկացությունը, առանձնահատկությունները:
12. Տեստսական ընկերակցությունների տեսակների (կազմակերպարավական ձևերի)՝ լիակատար ընկերակցության և վստահության վրա հիմնված (կոմանդիտային) ընկերակցության ընդհանուր բնութագիրը:
13. Տեստսական ընկերությունների տեսակների (կազմակերպարավական ձևերի)՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության, բաժնետիրական ընկերության, արտադրական կոոպերատիվի ընդհանուր բնութագիրը:
14. Ոչ առևտրային կազմակերպությունների հասկացությունը, տեսակները, իրավական կարգավիճակը:
15. Պետական ոչ առևտրային կազմակերպությունները որպես իրավաբանական անձեր: Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենսդրությունը: Պետական ոչ առևտրային կազմակերպությունների հասկացությունը, իրավունակության առանձնահատկությունները: Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գույքային առանձնացվածության առանձնահատկությունները:
16. Վերահսկող և վերահսկվող իրավաբանական անձինք:
17. Հիմնարկների քաղաքացիարավական կարգավիճակը:

Հարցեր 1-11 – Անցկացվում է ակնարկային դասախոսություն:

Հարցեր 1-11 – Անցկացվում է սեմինար և գործնական պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում տրված հարցերով, և խնդիրների լուծում:

Հարցեր 12-17 – Ինքնուրույն աշխատանք՝ նախապես հանձնարարված կյուբի ուսումնասիրություն:

Հարց 4 – Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողներն կատարում են նախապես տրամադրված կանոնադրային փաստաթղթերի ուսումնասիրություն:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաօժանդակ կյուբեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք:
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք:
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք:
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:
- «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք:
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:

- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:
- «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրրենքը:
- **Քարտեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 2-րդ հրատ., - Եր., 2009:
- **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, - Եր., 2013:
- **Ավետիսյան Վ.Դ., Մեղրյան Ս.Գ.** Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 15-ի Կոիլիոֆերը և Միևարիկը ընդդեմ Չեխիայի վճիռը (application 32921/03, 28464/04):
- ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թ. թիվ 3-12 (ՏԴ) քաղաքացիական գործով որոշումը (ընկերության բնականոն գործունեությանը խոչընդոտելը որպես ընկերության մասնակցին ընկերությունից հեռացնելու հիմք):
- ՀՀ վճռաբեկ դատարանի 2006թ. սեպտեմբերի 28-ին թիվ 3-2027 (ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշումը (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի վերաբերյալ):
- ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՎԴ/4342/05/09 գործով կայացված որոշումը (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի վերաբերյալ):

ԹԵՄԱ 8.

Հայաստանի Հանրապետությունը և վարչատարածքային միավորումները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ

(ինքնուրույն աշխատանք)

1. Հայաստանի Հանրապետությունը որպես քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտ: Պետության անձեռնմխելիությունը (իմունիտետը):
2. Հայաստանի Հանրապետության ունիվերսալ իրավունակությունը. հասկացությունը և բովանդակությունը: Քաղաքացիական հարաբերություններին պետության մասնակցության նպատակները: Պետության բացառիկ իրավասությունները: Պետական մենաշնորհ:
3. Քաղաքացիական հարաբերություններին պետության մասնակցության ձևերը՝ անմիջական և անուղղակի (միջնորդավորված) մասնակցություն:
4. Պետական մարմինները, որոնք լիազորված են քաղաքացիական իրավահարաբերություններում հանդես գալ Հայաստանի Հանրապետության անունից: Նրանց քաղաքացիաիրավական կարգավիճակը:
5. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը արտաքին և ներքին շրջանառությունում:

6. Մարզերի և համայնքների մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններում:
7. Համայնքների իրավունակության առանձնահատկությունները: Քաղաքացիական հարաբերություններին նրանց մասնակցության նպատակները և նյութական հիմքը: Համայնքի մասնակցության ձևերը՝ անմիջական և անուղղակի (միջնորդավորված) մասնակցություն:

Հարցեր 1-7 – Ինքնուրույն աշխատանք՝ նախապես հանձնարարված նյութի ուսումնասիրություն:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնասովորական նյութեր

- Հայաստանի Հանրապետության սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- **Քարտեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2006:
- **Ավետիսյան Վ.Ղ., Մեղոյան Ս.Գ.** Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

ԹԵՄԱ 9.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

(դասախոսություն 2 ժամ)

1. Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը: «Իրավահարաբերության օբյեկտ» հասկացության տարբեր իմաստները:
2. Քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտների տեսակներն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության (իրերը, աշխատանքները, ծառայությունները, ոչ նյութական բարիքները, մտավոր գործունեության արդյունքները, տեղեկատվությունը):
3. «Գույք» հասկացությունը, նրա հարաբերակցությունն այլ հարակից հասկացությունների հետ:
4. Քաղաքացիական իրավունքի օբյեկտների շրջանառունակությունը: Շրջանառությունում չսահմանափակված օբյեկտներ: Սահմանափակ շրջանառությամբ օբյեկտներ: Օբյեկտներ, որոնք հանված են շրջանառությունից:
5. Իրերի հասկացությունը, նրանց դասակարգումը, իրերի դասակարգման իրավական նշանակությունը: Անշարժ գույք. հասկացությունը, հատկանիշները, հատուկ իրավական կարգավորման նշանակությունը: Անշարժ գույքի պետական գրանցումը. իրավական կարգավորումը, գրանցման համակարգը:
6. Դրամական միջոցներ (ազգային դրամ, տարարժույթ): Արժույթային ար-

- ժեքների քաղաքացիաիրավական ռեժիմի առանձնահատկությունները:
7. Արժեթղթեր, նրանց տեսակները. պարտատոմս, չեկ, մուրհակ, բաժնետոմս, կոնոսամենտ, բանկային հավաստագրեր և գրքույկներ:
 8. Մտավոր գործունեության արդյունքները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ: Ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, սպասարկման նշանը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ:
 9. Տեղեկատվությունը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ: Առևտրային գաղտնիքի իրավական պահպանությունը:
 10. Անձնական ոչ նյութական բարիքները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներ (քաղաքացու անունը, պատիվը, արժանապատվությունը, իրավաբանական անձի անվանումը, գործարար համբավը և այլն):
 11. Աշխատանքները և ծառայությունները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներ:

Չարդեր 1-5 – Անցկացվում է ներածական դասախոսություն:

Չարդեր 6-11 – Ինքնուրույն աշխատանք՝ նախապես հանձնարարված նյութի ուսումնասիրություն:

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- **Քարտեզյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, - 3-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2006:
- **Ավետիսյան Վ.Դ., Մեղրյան Ս.Գ.** Քաղաքացիական իրավունք (գործնական պարապմունքների ձեռնարկ), Մաս առաջին, ԵՊՀ հրատ., - Եր., 2006:

**ԹԵՄԱ 10.
ԳՈՐԾԱՐՔՆԵՐ**

(դասախոսություն՝ 8, սեմինար՝ 2, գործնական՝ 4 ժամ)

1. Գործարքների հասկացությունը և նշանակությունը: Գործարքը որպես քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն ուղղված գործողություն:
2. Գործարքը որպես կամային և իրավաչափ գործողություն: Գործարքի հիմքերը (նպատակը):
